Ինչպես Ուղղել Ձեր Սոցիալական Ապահովության Հասույթի Տեղեկությունը

Բովանդակություն

Ինչու՞ է կարևոր, որ իմ հասույթի վերաբերյալ գրանցումները ճշգրիտ լինեն՝	1
Ինչպե՞ս կարող է հասույթը ընգրկված չլինել՝	2
Ի՞նչ պետք է ես անեմ եթե հասույթի գումարները բացակայում են՝	2
Ինչպե՞ս կարող է Սոցիալական Ապահովությունը օգնել՝	2
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	2

Եթե Դուք 18 տարեկան եք կամ ավելի բարձր, ապա Դուք կարող եք ստեղծել *my* Social Security անձնական հաշիվը: Այցելելով ***www.socialsecurity.gov/myaccount*** կայքէջ՝ Դուք կարող եք ստանալ Ձեր Սոցիալական Ապահովության Հաշվետվությունը (*Social Security Statement*), որպեսզի ստուգեք Ձեր հասույթի գրանցումները, և տեսնեք Ձեր ապագա կենսաթոշակային, հաշմանդամության և ժառանգորդի նպաստների նախահաշվարկները: Դուք պետք է Ձեր անձնական հաշիվը ուշադիր ստուգեք, որպեսզի վստահ լինեք, որ այն արտացոլում է Ձեր կողմից յուրաքանչյուր տարի վաստակած ճշգրիտ գումարը, ինչպես նաև վստահ լինելու, որ Ձեր անունը և ծծնդյան ամսաթիվը ճիշտ են նշված:

Ինչու՞ է կարևոր, որ իմ հասույթի վերաբերյալ գրանցումները ճշգրիտ լինեն՝

Սոցիալական Ապահովության գումարը, որը Դուք կամ Ձեր ընտանիքը ստանում է, կախված է Ձեր հաշվառման ներքո արտացոլվող գումարից: Եթե Ձեր հաշվառման ներքո արտացոլված չէ Ձեր ողջ հասույթը, ապա դա Ձեր և Ձեր ընտանիքի համար կհանգեցնի ավելի ցածր Սոցիալական Ապահովության նպաստների:

Ինչպե՞ս կարող է հասույթը ընգրկված չլինել՝

Եթե Ձեր Սոցիալական Ապահովության հաշվառման մեջ չընգրկված գումարը՝ ընթացիկ տարվա կամ անցյալ տարվա գումարն է, ապա Դուք չունեք անհանգստանալու կարիք: Քանի որ այդ հասույթը հանդիսանում է վերջին շրջանի հասույթ, հնարավոր է մենք այդ հասույթը դեռևս գրանցած չլինենք: Այն պետք է հայտնվի ավելի ուշ շրջանի Հաշվետվությունում (*Statement*):

Այնուամենայնիվ, հասույթի որոշ գումարներ կարող են բացակայել Ձեր հաշվառումից ավելի վաղ տարիների համար ստորև ներկայացված պատճառներից որևէ մեկով՝

- Ձեր գործատուն հայտարարագրել է Ձեր հասույթը սխալ անվան կամ Սոցիալական Ապահովության սխալ համարի ներքո:
- Ձեր գործատուն սխալ է հայտարարագրել Ձեր հասույթը:
- Դուք ամուսնացել եք կամ ամուսնալուծվել եք և փոխել եք Ձեր անունը, սակայն երբեք չեք զեկուցել այդ փոփոխության մասին Սոցիալական Ապահովությանը:
- Դուք աշխատել եք՝ օգտագործելով Ձեզ չի պատկանող Սոցիալական Ապահովության համար:

Ի՞նչ պետք է ես անեմ եթե հասույթի գումարները բացակայում են՝

Եթե Ձեր հաշվառումից բացակայող գումարներ եք բացահայտում, ապա առաջին բանը, որը Դուք պետք է անեք, դա այդ հասույթի համար որևէ ապացույցների հայտնաբերելն է: Այդ ապացույցը կարող է լինել՝

- Ձևաթուղթ W-2 (Աշխատավարձի և Հարկերի Հաշվետվություն (*Wage and Tax Statement*);
- Հարկային հայտարարագիր;
- Աշխատավարձի վճարման ստացականը (wage stub) կամ աշխատավարձի հաշվարկային թերթիկը (pay slip);
- Աշխատավարձի վերաբերյալ Ձեր սեփական գրառումները; կամ
- Այլ փաստաթղթեր, որոնք արտացոլում են Ձեր աշխատանքը:

Եթե Դուք չեք կարող գտնել որևէ գրավոր փաստաթուղթ, որտեղ արտացոլված է Ձեր հասույթը, ապա փորձեք հիշել հետևյալ փաստերը, և գրի առեք դրանք՝

- Որտեղ եք Դուք աշխատել;
- Ձեր գործատուի անունը;
- Ձեր աշխատած ժամանակահատվածի ամսաթվերը;
- Որքան եք Դուք վաստակել; և
- Անունը և Սոցիալական Ապահովության համարը, որոնք Դուք օգտագործել եք աշխատելու ընթացքում:

Ինչպե՞ս կարող է Սոցիալական Ապահովությունը օգնել՝

Այն բանից հետո երբ հավաքեք Ձեր փաստաթղթերը կամ կազմեք այն ողջ տեղեկատվության ցանկը, որը Դուք կարող եք հիշել, կապ հաստատեք Սոցիալական Ապահովության հետ: Մենք կաշխատենք Ձեզ հետ Ձեր հաշվառումը վերականգնելու համար: Այդ գործընթացը կարող է որոշակի ժամանակ պահանջել՝ ելնելով Ձեր բացակայող հասույթի վերաբերյալ Ձեր կողմից տրամադրված տեղեկատվությունից: Հնարավոր է անհրաժեշտ լինի, որ մենք կապ հաստատենք Ձեր գործատուների հետ, կամ Դուք արդեն դա արած կլինեք:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և

(շրջել)

Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այեցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Social Security Administration
Publication No. 05-10081-AM | July 2017
Ինչպես Ուղղել Ձեր Սոցիալական Ապահովության Հասույթի Տեղեկությունը
How to Correct Your Social Security Earnings Record (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: